ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 հուլիսի 2021թ. թիվ 343-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀՐԴԵՀԱՎՏԱՆԳ ԵՎ ԱՌԱՎԵԼ ՀՐԴԵՀԱՎՏԱՆԳ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԲՈՒՍԱԾԱԾԿ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՀՐԴԵՀՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՒ ԱՌԱՋԱՑԱԾ ՀՐԴԵՀՆԵՐԻ ՄԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) Լոռու մարզի տարածքում հրդեհավտանգ և առավել հրդեհավտանգ ժամանակաշրջաններում անտառային և այլ բուսածածկ տարածքներում հնարավոր հրդեհների կանխարգելման ու առաջացած հրդեհների մարման կազմակերպման նպատակով, համաձայն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2014թ. մայիսի 27-ի թիվ 184-Ա որոշմամբ հաստատված «Արտակարգ իրավիճակներում ՀՀ Լոռու մարզի բնակչության պաշտպանության պլանի» 9-րդ հավելվածի, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով և «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Սահմանել, որ ՀՀ Լոռու մարզի անտառային և այլ բուսածածկ տարածքներում հրդեհավտանգ ժամանակաշրջանն ընդգրկում է ձյունածածկի վերացման պահից մինչև նոր ձյունածածկ գոյանալը, իսկ բարձր կարգի հրդեհավտանգ իրավիճակը հայտարարվում է ՀՀ ԱԻՆ «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից:

2. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության (այսուհետ՝ ԱԻՆ ՓԾ) Լոռու մարզային փրկարարական վարչության պետին՝

1) համակարգել մարզի անտառային և այլ բուսածածկ տարածքներում առաջացած խոշոր հրդեհների մարման աշխատանքներում ընդգրկված ուժերի ու միջոցների գործողությունները.

2) ցուցաբերել մեթոդական և գործնական օգնություն անտառամերձ համայնքներին՝ համայնքի բնակիչներից կամավոր հրշեջ խմբեր կազմավորելու և հագեցնելու ուղղությամբ.

3) բարձր կարգի հրդեհավտանգ իրավիճակի մասին իրազեկել մարզպետարանի համապատասխան ստորաբաժանման և մարզի ծառայությունների, անտառտնտեսությունների և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին՝ նրանց կողմից անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու

համար:

3. Անտառամերձ համայնքների ղեկավարներին՝

1) ՀՀ ԱԻՆ ՓԾ Լոռու մարզային փրկարարական վարչության հետ համատեղ կազմակերպել համայնքի ջրամատակարարման համակարգի ցանցի վրա անհրաժեշտ հակահրդեհային ջրածորանների (հիդրանտների) կամ այդ նպատակի համար մոնտաժված լցավորող ծորակների տեղադրումը և շահագործումը, ինչպես նաև արհեստական բաց ջրաղբյուրներից՝ լճակներից, գետերից ջրառման ապահովումը,

2) հրդեհավտանգ և առավել հրդեհավտանգ ժամանակաշրջաններում տանել բացատրական աշխատանքներ համայնքի բնակչության շրջանում՝ անտառային և այլ բուսածածկ տարածքներում հրդեհային անվտանգության կանոնների պահպանման ուղղությամբ,

3) բացառել համայնքի բնակչության կողմից համայնքային, գյուղատնտեսական, անտառամերձ ու անտառային տարածքների հողերում խոզանների, բուսական մնացորդներով ու չորացած բուսականությամբ տարածքների, արոտավայրերի ու խոտհարքների բուսականության այրումը,

4) 5-օրյա ժամկետում համայնքի բնակիչներից կազմավորել կամավոր հրշեջ խմբեր և ՀՀ ԱԻՆ ՓԾ Լոռու մարզային փրկարարական վարչություն ներկայացնել այդ ջոկատների անձնակազմի ճշգրտված տվյալները,

5) առավել հրդեհավտանգ ժամանակաշրջանում և բարձր կարգի հրդեհավտանգ իրավիճակում համայնքի առավել հրդեհավտանգ տեղամասերում անհրաժեշտության դեպքում սահմանել մշտական հսկողություն և հերթապահություն,

6) կազմակերպել համայնքի անտառային և այլ բուսածածկ տարածքներում առաջացած հրդեհների մարման աշխատանքները, աջակցել հրշեջ-փրկարարական ջոկատներին ու անտառտնտեսության աշխատակիցներին՝ անտառային և այլ բուսածածկ տարածքներում առաջացած հրդեհների մարման աշխատանքներում,

7) համայնքի բյուջեում նախատեսել գումարներ՝ անտառային և այլ բուսածածկ տարածքներում առաջացած հրդեհների մարման աշխատանքների իրականացման համար:

4. Առաջարկել «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Վանաձորի, Ձիլիզայի, Թումանյանի, Ստեփանավանի և Տաշիրի անտառտնտեսությունների տնօրեններին՝

1) ապահովել ՀՀ կառավարության 1998 թվականի սեպտեմբերի 19-ի «ՀՀ անտառներում հրդեհային անվտանգության կանոնները հաստատելու մասին» №589 որոշման հավելվածի 11-րդ կետում նշված պարտավորությունների իրականացումը,

2) անտառային և այլ բուսածածկ տարածքներում հայտնաբերված հրդեհների, դրանց պատճառած վնասների վերաբերյալ անմիջապես տեղյակ պահել ՀՀ ԱԻՆ ՓԾ Լոռու մարզային փրկարարական վարչության 911 ծառայությանը, ինչպես նաև անմիջապես արձագանքել 911 ծառայությունից ստացված ահազանգերին:

5. ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության պետին՝

1) աջակցել անտառային և այլ բուսածածկ տարածքներում առաջացած հրդեհների պատճառների, ինչպես նաև մեղավոր անձանց հայտնաբերման (եթե կան այդպիսիք) և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու աշխատանքներին,

2) աջակցել անտառային և այլ բուսածածկ տարածքներում առաջացած

հրդեհների մարման աշխատանքներին, անհրաժեշտության դեպքում՝ ՀՀ ԱԻՆ ՓԾ Լոռու մարզային փրկարարական վարչության առաջարկությամբ առավել վտանգավոր հատվածներում սահմանել հերթապահություն, իրականացնել բնակչության իրազեկման և տարահանման միջոցառումներ:

6. ՀՀ Լոռու մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետին՝ ՀՀ ԱԻՆ ՓԾ Լոռու մարզային փրկարարական վարչությունից բարձր կարգի հրդեհավտանգ իրավիճակի վերաբերյալ տեղեկատվությունն ստանալուց հետո ժամանակին նախազգուշացնել և ապահովել հավաստի ու օպերատիվ տեղեկատվությամբ՝ մարզի տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին:

7. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահում եմ ինձ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

7/8/2021

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2021թ. հուլիսի 7
ք.Վանաձոր